ՁԱԳՍՈՒՄԸ օշերեդ ա

Այսպես են ղարաբաղցիները կես կատակ նկարագրում ամուսնությունների գրանցման գործընթացը: Եթե նախկինում ՁԱԳՍ գնալն աննկարագրելի քաջություն էր պահանջում երիտասարդ զույգերից, ապա այսօր այն խաղուպար է դարձել. ղարաբաղցիք «քսյորա յետ որոշալն քինան» (ղարաբաղցիները կեսօրից հետո որոշել են զագս գնալ):

Լուսինե ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

Այս տարվա հունվարի 1-ից մինչեւ մարտի 31-ը ներառյալ Ստեփանակերտի քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնում գրանցվել է 714 ամուսնություն, ինչը մի քանի անգամ ավելի է նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատ: Ամուսնությունների այս աճի բուն «պատճառը» Ղարաբաղի կառավարության ընդունած որոշումն է, ըստ որի, նորապսակներն ամուսնության վկայականի հետ միասին ստանում են նաեւ միանվագ դրամական օգնության հավաստագիր, իսկ օգնության չափը կազմում է 300 հազար դրամ:

ԼՂՀ նախագահական ընտրությունների քարոզարշավի ընթացքում դեռ նախագահի թեկնածու Բակո Սահակյանն իր նախընտրական ծրագրում խոստացավ ընտրվելու դեպքում 2008 թվականից խրախուսել նորաստեղծ ընտանիքներին եւ ցուցաբերել պետական աջակցություն: Ամուսնացող երիտասարդները, լսելով այս խոստումը, նախընտրեցին իրենց ամուսնությունը գրանցել 2008 թվականի հունվարի 1-ից հետո: Նույնիսկ մի քանի տարի առաջ ամուսնացած զույգերը, որոնք չէին գրանցել ամուսնությունը, տարեսկզբից շտապեցին ՁԱԳՍ: Ինչի արդյունքում, ըստ վիճակագրական տվյալների՝ 2007-ին ամուսնությունների թիվը Ղարաբաղում 161-ով պակաս է գրանցվել, քան 2006-ին: Կարապետյան ամուսինները 4 տարվա համատեղ կյանքից հետո միայն ապրիլի 1-ին են որոշել ամուսնանալ. «Չէինք էլ մտածել զագսավորվելու մասին, բայց երբ լսեցինք, որ պաշտոնական գրանցումից հետո 300 հազ. դրամ կստանանք, ամուսինս որոշեց ՁԱԳՍ շտապել»,- պատմում է 32-ամյա Ինգան: Ի դեպ՝ ամուսնության միանվագ նպաստ կարող են ստանալ մինչեւ 40 տարեկան ամուսնացող զույգերը, որոնք ունեն ԼՂՀ գրանցում:

Ղարաբաղում 28 տարեկանից բարձր տղաներին ու աղջիկներին ամուսնության առումով անհույս են համարում, ուստի ձգտում են ամուսնանալ մինչեւ 25 տարեկանը:

«Չնայած մեր հարեւաններն ինձ արդեն համարում են տանը մնացած, բայց ես դեռ չեմ շտապում: Տարեցտարի պայմաններ են ստեղծվում նորաստեղծ զույգերի համար, ինչը ոգեւորում է, բայց ինձ չի գայթակղում»,- այս կարծիքին է 23-ամյա Դիանա Մեհրաբյանը: Վաղ տարիքում են ամուսնանում հատկապես ղարաբաղի գյուղերում: «Մեր գյուղում աղջիկներն ամուսնանում են 17-22 տարեկանում: Երեւի թե այդ տարիքից բարձր գյուղում չամուսնացած աղջիկ չես գտնի կամ էլ հազվագյուտ կլինեն»,- պատմում են Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղի աղջիկները, որոնք հազիվ 22-23 տարեկան կլինեն, բայց արդեն 2-3-ական երեխա ունեն: Ղարաբաղում քիչ չեն այնպիսի զույգերը, որոնք իրենց ամուսնությունն անընդհատ հետաձգում են, օրինակ, հարսանիք կազմակերպելու համար բավարար ֆինանսական միջոցների սղության պատճառով: 28-ամյա ստեփանակերտցի Կարեն Պետրոսյանը, օրինակ, խոստովանում է, որ պլանավորել էր հարսանիքից հետո պաշտոնական գրանցում ստանալ, բայց երբ «300 հազար դրամի մասին լսել է, որոշել է հակառակը անել»՝ ամուսնությունը գրանցել, հետո հարսանիք անել:

Գուցե կառավարության նոր ծրագիրը լուրջ օգնություն դառնա երիտասարդ զույգերին եւ խթան հանդիսանա ամուսնությունների աճի համար: ղարաբաղում ակնկալում են, որ ամուսնությունների թիվը 2008-ին բավական գերազանցելու է նախորդ տարիների ցուցանիշները:

Ըստ ԼՂՀ 2008 թվականի պետբյուջեի, այս ծրագրի համար նախատեսված է 450 մլն. դրամ: Սա նշանակում է, որ 2008-ին 1500 նոր ընտանիք կարող է օգտվել 300 հազ. միանվագ նպաստից: